



ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Դոկտոր ՀՅՈՒԼԵՏ ԶՈՆՍՈՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ*



րբ Վրաստանեն Հայաստան կանցնեի օդանավով, մտքիս մեջ տիրող մտածումը սա էր, թե «Նորհրդային կարգերը ի՞նչ բերին այս երկրին»:

Բավական երկար ատեն մը Սովետական Հայաստան մնալի վերջ երբ օր մը Թիֆլիս կվերադառնալի շոգեկառքով, սա պատասխանը տվի ինքզինքիս. «Նորհրդային վարչակարգը Հայաստանին բերած է խաղաղություն, բարգավաճ տնտեսական վիճակ, երջանկություն և խոստովանելից ասպագա մը»:

Կովկասյան լեռնաշղթան կտրելով, ուր ձյունը տակավին ասպարեզ կկարդար միջամառային արևուն, և Սևանի եզերքեն թռելով, որ աշխարհի ամենեն բարձրադիր լինէն է, քառասուն մղոն ավելի մոտեցա Երևանի, Սովետական Հայաստանի մայրաքաղաքին: Օդին մեջ քաղաքին շուրջ պտույտ մը շունեցա, քանի որ խորհրդային օդանավեր այդ սովորությունը չունին: Բայց կարելի եղավ արագ ակնարկով մը տեսնել թե որքան զեղեցիկ էր Սովետական Հայաստանի անզուգական մայրաքաղաքը: Երևան կուարածվի ընդարձակ ավազանի մը մեջ, ուր բլուրներ տափարակնալով կերկարին դեպի Արարատի փայլուն գագա-

թը: Երևանն անցա շրջակա դավանները և դեպի հյուսիս՝ Սևան և էջմիածին:

Ամեն դասակարգի մարդոց հետ խոսեցա: Տեսա բանվորներ քաղաքի մեջ կամ շինականներ դաշտերու մեջ, ուսուցիչներ, ուսուցչապետներ, ճարտարապետներ, արվեստագետներ, երկրաչափներ և թեմական կղեր: Այցելեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ Հայաստանյայց Եկեղեցվոյ գերագույն աստիճանավորն է, ինչպես նաև եպիսկոպոսներու, արքեպիսկոպոսներու, առաջնորդներու և պատրիարքներու, որոնք եկած էին Գահիրեն, Պեյրուսին, Երուսաղեմեն, Կալիֆորնիային և Նյու-Յորքին: Երևանը ուսումնասիրեցի քաղաքի ճարտարապետին օգնությամբ և ուշադրությամբ քննեցի մեծ խնամքով պատրաստված հատակագիծերը ասպագա շինարարությանց համար: Անուրանալի էր, որ մեծ հառաջադիմություններ եղած էին Երևանի, ինչպես նաև երկրին զանազան շրջաններուն մեջ և տակավին ալ կշարունակվեին:


Նախա-հեղափոխական Երևանը 24 հազար բնակչությամբ, ցեխե երդիքներով, աղյուսան տնակներով, հնակարկատներուն եղ գոհհներով, այժմ եղած է արդիական քաղաք մը 300 հազար բնակչությամբ: Երևան քաղաք մըն է, որ կմեծնա զարմանալի արագությամբ: Ակադեմիկոս Թամանյանի քանի մը տարի առաջ գծած հատակագիծը, Երևանը 150 հազար բնակչությամբ քաղաք մը շինելու, բոլորովին անարժեք դարձած է, քանի որ նորեր պատրաստված են 450 հազար բնակիչներու համար: Այս հատակագիծերուն հղացումի շքեղությունը համեմատական է անոնց իրականացման արագության:

*) Դոկտոր Հյուլեա Զոնսոնը Սովետական միությունում կատարած իր ճանապարհորդությունների մասին մի քանի հոդվածներ է գեղեցիկ թՂԸ ԱԹԱՐ ՌԻԲԼԻ շարաթարթի մեջ: Այդ հոդվածներից մեկն է «Երիտասարդ խորհրդային Հայաստանը», որի հայերեն թարգմանությունը արտատպում ենք Հայկական հրատարակչությանը Երևանում:

Նույնիսկ պատերազմի ամեննն վտանգավոր շրջանին, երբ գերմանական հատաչխաղացողը Կովկասեն դեպի Երևան հավանական դարձած էր, դարձյալ շկասեցավ Երևանի շինարարությունը: Արդարև գաղթականներու ներխուժումը հարկադրեց շինարարությանը շարունակումը: Կամուրջը, որ կմիացնի Զանգվի հովիտը, արդեն մոտեցած է ավարտման:

Երևան օժտված է շքեղ դիրքով, պարագա մը, որ նկատի կառնվի քաղաքի ընդարձակման համար պատրաստված

Ալյումինիումը պիտի պատրաստվի տեղական բոֆսիտեն: Հսկա մըն է սինթեթիկ քաուչուրի գործարանը, որ հաստատված է քաղաքին հյուսիսը: Հրապարակներ, փառավոր շենքեր, — շատեր արդեն կառուցված, — կկազմեն քաղաքին գլխավոր առանցքը: Բնակության տուններու պակասը տակավին զգալի է ճարտարաբունստի ընդարձակման և ներգաղթողներու պատճառով: Բնակության համար տուներ պիտի շինվին խմբական տիպարով և որբան կարելի է հեռու գլխավոր երթևեկի պողոտաներեն:



1945 թվի Ազգային-նկերեցական ժողովի նիստերից մեկը. առաջին շարժում աջ կողմից զոֆտ. Հյուլետ Զոնտոնը

քարտեսներու վրա: Գլխավոր պողոտաները կճեղքեն քաղաքը և իրարու կմիացնեն անոր ղանադան մասերը: Գործարաններ հաստատված են քաղաքին զանազան կողմերը ըստ հարմարության:

Շինարարություն կծրագրվի. — Գինիի գործարանները ընդարձակ մասնաներով, որոնք շատ են, ունին հսկա պահեստ հսկա տակառներու: Գինիի գործարանները կտարածվին քաղաքին արևմտյան կողմը: Հյուսիսային սարահարթին վրա սկսած են շինել ալյումինիումի հսկա գործարան մը:

Համալսարանը, գիտական, ճարտարաբունստի շենքերը, տպարանները համախումբված են քաղաքին հյուսիսային կողմը բուլուրներու ստորոտը և կկազմեն մշակութային գաղութ մը: Ստալինյան պողոտայի վերջավորության կբարձրանա Հայկական ճոխ ձեռագիրներու հոյակապ Մատենադարանը, որուն մոտերը պիտի բարձրացվի հսկայական սանդուխ մը, երկու կողմերը ջրվեժներով, զոր ծրագրած են ավարտել շորս տարվան մեջ: Ուսանողներու և արվեստագետներու պիտի հատկացվի այս քաղաքի մասը: Բուժարաններ և մանկամսուր-

ներ կարծես սքողված են հյուսիսի բլուրներուն վրա գտնվող ծառերու և պարտեզներու միջև: Հյուսիսային կողմի բլուրները հարուստ են նորահաս ծառերով: Բլուրներուն կողքերը դալար կպահովին կանոնավոր ջրբուսուրդով, մինչդեռ նախապես անոնք կներտուգրով, մինչդեռ նախապես անոնք կներտուգրով, մինչդեռ նախապես անոնք կներտուգրով, մինչդեռ նախապես անոնք կներտուգրով:

Երևանի յուրաքանչյուր փողոցը ծառուղի մըն է: Գավառը կխուժե՞ղ ղեպի քաղաք: Կայնորեն կօգտագործվին Երևանի գլխավոր հարստութիւնները՝ առատ ջուր և հսկա էլեկտրական ուժ, որ կհայթայթվի Սևանեն հոսող արագավազ գետին: Սունկի պես բուսնող բազմաթիվ գործարաններ, որ կբուսնան կանոնաւոր կերպով իրենց քաղաքացի հայերուն, կհայթայթեն այս հսկա շինարարական ձեռնարկներուն իրագործման համար պետք եղած գումարները: Երկրագործութիւնը կը զարգանա, երկրին հարստութիւնը կբազմապատկվի: Հայաստան, որ ծայր աստիճանի շքավոր և աղքատ էր, հարստութեան հասնելու համար արդեն լայն պողոտայի վրա կգտնվի այսօր:

Սոսկ նյութական բարգաւաճում և շինարարութիւն չեն հորհրդագրին Հայաստանի ցուցաբերած ապշեցուցիչ նվաճումները, այլ մշակութային զարգացումն ալ նույնքան և ավելի՛ ուժով և կենսունակութեամբ ի հայտ կուրա: Հայերն ի ծնն բնատուր ձիրքերով օժտված՝ զեղարվեստասեր ժողովուրդ մըն են: Անոնք կիրտած են և ժառանգ ձգած են զեղարվեստական հիանալի հարստութիւններ, որոնք պատիվ կբերեն ունէ՛ ազգի, հակառակ երկար դարերու իրենց կրած տառապանքներուն և հարստահարութեանց իրենց հարևաններուն կողմի: Եթէ պետք եղած միջոցներն ու առիթը տրվին, անոնք ապահովաբար պիտի կերտեն ավելի մեծ ապագա մը: Հայերուն դժնդակ կյանքը, բեռնավոր աճուղի վտանգներով, դրդիչ ուժ մը եղավ անոնց ստեղծագործութեանց: Գտնվելով Արևելեան և Արևմտեան քաղաքաշինութեանց միացման գծին վրա, արեցալի մեծ մեծապես օգտված են երկուքն ալ և զանոնք իրենց սեփական բովանդակման սանցրենով, դրոշմելով անոնց Հայկական հատկանշականութիւն և դիմագիծ, զանոնք գործածած են ուրիշ ստեղծագործութեանց:

Երկու հազար տարի առաջ Եվրոպիոյ թատրերգութիւնները կներկայացվին Հայկական առաջին թատրոնին մեջ, Շեքսպիր գերագանցաբար ժողովրդական է հոս այս-

օր և նոր թատրերգական կյանք մը կարծարծեց: Ուրիշ Սարգսյան, հռչակավոր ամերիկացի գրողը, որ հայկական ծագում ունի, դերասաններու համար կերտած է մրցող դպրոց մը: Թատրերգութիւնը կծաղկի: Օփերան, որ կներկայացվի հայաստանի, նորահաս օփերայի շենքին մեջ, իսկապես արժանի է կենսի շքանշանին, որուն արժանացեր է արդեն: Հայկական օփերան ջերմ ընդունելութիւն կը ստանայ գտնիլ, նմանապես Երևանի երիտասարդ, տաղանդավոր նվագածուները, պարողները, և գուսանական խումբերը, որոնք տեսա և լսեցի: Հոս հայկական ինքնատիպ մշակութիւնը կհասնի իր գագաթնակետին և որուն խարխիւր շատ խոր և ընդարձակ է: Մշակութիւնը, զեղարվեստը զանգվածներուն կհասնին, կյուրացվին անհագաբար:

Խորհրդային Հայաստան ունի նաև նկարիչներու դպրոց մը: Ներկա եղա արդիական նկարներու, քանդակներու և արձաններու ցուցահանդեսի մը: Մեծամասնութիւնը կենդանի, գունեղ և խոստովանալից էր: Խորհրդային Հայաստանի մեջ, ինչպես նաև Խորհրդային Միութեան մեջ, երբ արվեստագետ մը ցույց կուտա իր տաղանդը, բացարձակապես կազատվի նյութական հոգերի և կրնա ինքզինք նվիրել զեղարվեստին:

Եկեղեցին ազատ է: Հայաստանայց Եկեղեցին մեծ բաժին մը ունի հայկական վերածնունդին մեջ: Ան ամենեն հին քրիստոնյա եկեղեցիներէն մեկն է և ամենեն շատ հալածված Եկեղեցին, որ տոկաց ծանր ճնշումներու և հասավ արշալույսին. փայլուն արշալույս մը, որուն արժանի է ան, քանզի Խորհրդային Հայաստանի մեջ բարոյական մեծ փոփոխութիւն մը կատարված է, փոփոխութիւն մը, որ առիթ տված է թե հասարակ մասնակից և թե ուսման մարտունակ զարգանալու: Մշակութային և հոգևոր սերմերու համար պարարտ հող կա, և Եկեղեցին պիտի կրնա օգտվիլ, եթէ հոժարի հառաչիմելու և ընդունելու արդի աշխարհի իմացական և գիտական նոր լույսերը: Հայուն կրոնական հայեցողութիւնը խորապես ազդված է գիտական հայեցակետն այն երկիրներուն, ուր ապաստան գտած է հալածանքի խուսափելով:

Ես ներկա եղա Կաթողիկոսական բնտրութեան Պատգամավորներու եկած էին 15 տարբեր երկիրներ և պատմական հյուրերն էին Խորհրդային Միութեան: Շատերուն հետ խոսեցա: Ներկա եղա այն նիստին, ուր որոշվեցավ հիմնել Ժառանգավորաց վարժարան մը 40 սաներու կրոնական դաստիա-

րակութեան համար և կազմել մասնադա-
րան մը: Կհիանայի անոնց ոգիին, ջերմե-
ռանդութեան և մտքի լուսավորութեան:

Ներկա եղա նմանապես հուզիչ արարողու-
թեան մը, երբ Կաթողիկոսը հանդիսավոր
կերպով կօծվեր և կօրհնվեր եպիսկոպոսնե-
րով և արքեպիսկոպոսներով շրջապատված՝
էջմիածնա Մայր Տաճարին մեջ, որ հիմնված
է 330-ին (Ք. Ք.):

Նոր կրօնական համաձայնութեամբ մը,
երկու ժամ տևող խորհրդակցութեան մը
վերջ, զոր կաթողիկոսական տեղապահը ու-
նեցած էր Ստալինի հետ, Հայաստանյայց
Եկեղեցին ստացավ ընդարձակ իրավասու-
թեաններ: Իրավասութեան տրվեցավ ար-
տասահմանի եկեղեցական ներկայացուցիչ-
ներուն ընտրութեանց մասնակցիլ էջմիածնի
մեջ, պարագա մը, որ հուշտ կարևոր է Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսին դիրքը զորացնե-
լու տեսակետեն Սփյուռքի մեջ: Արտոնու-

թեան տրված է նմանապես հիմնելու Ժա-
ռանգավորաց վարժարան մը, մասնադա-
րան մը և տպարան մը: Նվազ կարևոր չէ
Կաթողիկոսի համար վերաբացումը նախ-
կին վանքապատկան շենքերու էջմիածնի
մեջ:

Խորհրդային Հայաստան, կրնամ վկայել,
որ թեև կոխած է նոր դարազուլու մը ճար-
տարարվեստի, ճարտարապետութեան, երկ-
րագործութեան և մշակութեան ու հողերու
մեջ: Այսպէս խորհրդային մարդկային
բարօրութեան համար Խորհրդային Միութեան
ընձեռած բարիքներուն փոքրագույնը չէ այն
պատեհութեանը, զոր ան կշամբն դանազան
ազգային մշակույթներու զարգացման, ամ-
րապես հաստատելով անտեսական օղակ-
ված միութեան մը: Խորհրդային Հայաս-
տան այդ բացառիկ հառաջդիմութեան լա-
վազույն մեկ տիպարն է:

Անգլերենից թարգ. Խ. ԳՈՒԹՈՒՃՅԱՆ

ՔՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԼՈՆՏՈՆԵՆ

«Արեւմուտք»-ը հաղորդում է.—

22 նոյեմբերի դիշերը Լոնտոնի Քենսինգ-
թրն Ռատոն Հոլի սրահներին մեկուն մեջ
տեղի ունեցավ հավաքույթ մը, նվիրված
Կաթողիկոսութեան Կրիկիային էջմիածին
վերահաստատումի հինգհարյուր ամյակին:

Հայ գաղութը ներկա էր: Տեր Շ. Գա-
լուստյան վարդապետ համառոտորեն վեր-
հիշելն վերջ 1441-ի նշանակալի դեպքը,
ժողովուրդին ներկայացուց օրվա երկու
հյուրերը՝ Մ. Ռ. Պիլզոլի և Գեր. Օլլոր Ռա-
թրհալս, Անգլո-սովետական բարեկամու-
թեան ընկերութեան պատգամավոր անդամ-
ները, որոնք վերջերս այցելելին Խորհրդա-
յին Միութեան և միաժամանակ Հայաստան
ու էջմիածին:

Հետաքրքիր էր լսել այդ հեղինակավոր
անձնավորութեաններու կարծիքը մեր հայ-
րենիքի մասին:

Անոնք հաճույքով վերհիշեցին իրենց ան-
ցուցած ուրախ ժամանցները Երևանի և
շրջակա քաղաքներու մեջ: Հայերուն հյու-
րասիրութեանը զիրենք զարմացուցած էր:
Գովքը ըրին կլիմային, ջուրին, ճարտարա-
վեստին և արտագրութեաններու որակին և
բանակին: Իրենց հիացումը հայտնեցին նոր
հսկայական շենքերու գեղեցկագիտական
ճաշակին, մերթ բաղդատութեան դնելով զա-
նոնք աշխարհի մեծագույն քաղաքներու նը-

ման կերտվածքներուն հետ: Վերջապես անց-
լիացի քննադատի աչքերով դիտված մեր
Խորհրդային Հայաստանը պատկերացվեցավ
մեզի իբր գեղեցիկ ու բնդարձակ ծառուղիներ
ով: Հրապարակներով, թատրոններով, եկե-
ղեցիներով, հիմնականոցներով և դպրոցնե-
րով:

Հայաստանի համալսարանը դրվեցավ հա-
մահավասար գծի վրա Լոնտոնի, Օքսֆորդ-
տի և Քեմպրիճի համալսարաններուն հետ:

Հայերը խանդավառ անձկութեամբ լսեցին
Սևանա լճի եզրին պատգամավորներու ի
պատիվ տրված խնջույքները և երջանիկ ըզ-
պացին ինքզինքնին լսելով որ այսքան կարճ
ատենի մեջ մեր հայրենիքը այնքան հառաջ-
դիմած է, որ Սովետ երկիրներու մեջ ա-
ռաջին շարքի վրա տեղ ունի այսօր:

Պ. Քյուրքճյան հայերու կողմն շնորհա-
կալութեան հայտնեց պատգամավորներուն:
Կար գեղարվեստական փոքրիկ բաժին մը
հայկական երգերու: Պ. Գասպարյան հա-
ջողապես նվագեց ջութակի վրա: Տիկ.
Գյուրտյան իր շնորհալի մասնակցութեանը
բերավ, նվագելով դաշնակի վրա Բարխու-
դարյանն, ինչպես նաև Խաչատուրյանն,
որոնք մեծապես զնահատուեցան ծափահա-
րութեաններով: Հաճելի տպավորութեան
տակ մեկնեցանք: